Քննարկվել է հաստատության
Մանկավարժական խորհրդի
23.12.2022թ. թիվ 05
արտահերթ նիստում

Տնօրեն՝ Ք. Մհարոնյան

Քննարկվել է հաստատության
կոլեգիալ կառավարման խորհրդի
26.12.2022թ. թիվ 09
արտահերթ նիստում

Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Գյումրի 2022

- Կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր
- Մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացանը
- Նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը
- Աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը
- Նպաստել նոր գաղափարների ստեղծմանն ու իրականացմանը՝ առաջացնելով մոտիվացիոն լուծումներ
- Ապահովել շրջանավարտ ուսանողների հետ կապ, կազմակերպել փորձի փոխանակում աշխատանքով ապահովված շրջանավարտ ուսանողների հետ
- Նպաստել երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը , օժանդակել իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը:

3.ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՏԵՂԱԿԱԼԻ, ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

- Ուսանողական խորհրդի ձևավորման համար Ուսումնարանում ձևավորվում է ընտրական հանձնախումբ, որի կազմում մտնում են տնօրենը, կազմակերպադաստիարակչական գծով տնօրենի տեղակալը, ուսմասվարը, կարիերայի կենտրոնի ղեկավարը, զինղեկը
- Ընտրական հանձնաժողովի նախագահն հանդիսանում է տնօրենը
- Ուսանողներին ներկայացվում է ուսխորհրդի գործունեությունը, կառույցի նպատակներն ու խնդիրները:
- Յուրաքանչյուր կուրսից համակուրսեցիների կողմից առաջադրվում կամ ինքնառաջադրվում են ՈւԽ-ի անդամներ, որոնց հանձնարարվում է կազմել ծրագրեր՝ ՈւԽ-ի գործունեության, նախատեսվող աշխատանքների վերաբերյալ,
- Ծրագրերին ուսանողներն անձամբ կարող են ծանոթանալ, հանդես գալ արդյունավետ, նպատակային առաջարկներով և նորարարական գաղափարներով,
- Ուսմասվարի վերահսկողությամբ իրականացվում է փակ քվեարկություն, քվեատուփում լցոնվում են առաջադրվող թեկնածուների անվանաթերթիկները՝ ՈւԽ կազմի համալրման նպատակով:
- Արդյունքներն ամփոփվում և հրապարակվում են հանձնախմբի կողմից:

- Առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն ընտրվում է որպես ՈՒԽ նախագահ և ըստ հավաքած ձայների հաջորդաբար բաշխմամբ համալրվում է կազմը/ տեղակալ, անդամներ/:
- Չնավորված կազմից բաց քվեարկությամբ ընտրվում է քարտուղարը

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- ՈՒսումնական տարվա սկզբում կազմվում է աշխատանքների կատարման տարեկան պլանը և ժամանակացույցը:
- Ամիսը մեկ անգամ նիստ է գումարվում, որի ընթացքում կազմակերպչական հարցեր, նախատեսված,իրականացրած միջոցառումների վերաբերյալ վերլուծություններ և այլն:
- Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է հաստատության կառավարման խորհրդի նիստերին՝ սովորողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին:
- Կարծիք է ներկայացնում հաստատության մանկավարժական խորհրդին՝ հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար ուսանողի նկատմանբ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ:
- Իր լիազորությունների շրջանակում մասնակցում է համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը
- Արձագանքում է և իր լիազորությունների սահմաններում ընթացք է տալիս ուսանողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին:
- Աշխատանքներ է տանում ուսանողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ
- Ուսանողական խորհուրդը առաջարկներ է ներկայացնում հաստատության տնօրինությանը՝
- Հաստատության ներքին կարգապահական կանոնների
- Սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման
- Հաստատության և ընտանիքի կապի ամրապնդման
- Դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների, յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման վերաբերյալ:
- Պաշտպանում է ուսանողների իրավունքները հաստատությունում
- Նպաստում է Ուսումնարանի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը

- Համագործակցում է կուրսղեկների, վարպետների,մեթոդական միավորումների, մանկավարժական խորհրդի հետ՝ աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումներն իրականացնելու համար:
- Ներկայացնում է I և II կիսամյակներում կատարած աշխատանքների հաշվետվությունը
- Տարեվերջում ամփոփվում են կատարած աշխատանքների արդյունքները և հաշվետվություն է ներկայացվում տնօրինությանը:

5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսանողական խորհրդի նախագահը

1. ՈՒԽ- նախագահն ընտրվում է 2 տարի ժամկետով
2. Ղեկավարում է ՈՒԽ-ի գործունեությունը՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում
3. Հանդիսանում է ուսանողների ներկայացուցիչը հաստատության մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում
4. Տարեկան հաշվետվություն է ներկայացնում ուսանողական խորհրդի և իր կատարած աշխատանքների վերաբերյալ
5. Ուսանողական Խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են այլ հաստատություն տեղափոխվելու, հրաժարական տալու,ինչպես նաև նրան անվստահություն հայտնելու դեպքում:
6. Անվստահություն հայտնելու նախաձեռնությունը կարող է քննարկվել, եթե այն նախաձեռնվում է սովորողների1/3-ի կողմից:
7. Ուսանողական Խորհրդի նախագահի անվստահությունը ընդունվում է սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների գերազանցման կամ իր վրա դրված պարտականությունները անհարգելի պատճառներով չկատարելու դեպքում:
8. Անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել ընտրության իրավունք ունեցող սովորողների 2/3-ը:
9. Սահմանված կարգով ընտրվում է նոր նախագահ

ԳԼՈՒԽ 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- սույն կանոնակարգը հրապարակվում է ուսումնարանի պաշտոնական կայքում
- սույն կանոնակարգը տարածվում է՝ այն կիրառման մեջ դնելուց հետո ծագած հարաբերությունների վրա

- կանոնակարգը վերանայվում, փոփոխության է ենթարկվում ըստ անհրաժեշտության
- Կանոնակարգը քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում, հաստատվում կամ նրա մեջ փոփոխություններ կատարվում են ուսումնարանի կառավարման խորհրդի որոշման հիման վրա: